

Հ. Պարարտութիւնը քանի տեսակ կը բաժնուի .

Պ. Հինգ տեսակ կրնայ բաժնուիլ իւր, կենդանեաց պարզ յաւելուածը . ք, բուսոց զուտ մնացորդը . դ, կենդանեաց ու բուսոց մնացորդներուն բաղադրութիւր . զ, կենդանեաց մնացորդները հանքային կամ հողային նիւթերու հետ խառնած . Ե, բուսոց մնացորդները՝ հողային կամ աղային նիւթերու հետ խառնած : Բայց ընդհանրապէս ասոնք ալ զատ զատ չեն գործածուիր, հապա այլևայլ տեսակները մէկմէկու հետ խառնելով :

Բրտերուն մէջ աւելի կը գործածուի կենդանեաց աղբերուն հետ խառնուած յարդը կամ չոր խոտը, որ ախոռներու մէջ կենդանեաց ոտքին տակը կը տարածեն : Բն պարարտութիւններն որ փտտելու ատեն սաստիկ կը տաքնան՝ արտին երեսը տարածելը շատ աւելի աղէկ է քան թէ հողին մէջ խառնելը : Իսկ անոնք որ կալուն ու պաղ են՝ թեթեւ ու աւազոտ հողերուն մէջ կը խառնուին, որպէս զի զանոնք քիչ մը պնդացրնեն :

Հ. Պարարտութիւնը երբ գործածելու է .

Պ. Իմաստուն երկրագործները այլևայլ կարծիք ունին աս բանիս վերայ . աւելի աղէկ կ'երևնայ զանոնք ախոռէն հանածիդ պէս հողին տակը թաղելը . վասն զի փտտելու ժամանակը ունեցած տաքութիւննին՝ հողերուն ու բոյսերուն շատ օգտակար ու հարկաւոր է :

Ի՞նչ աղբը կրնայ ան արտերուն մէջ դրուիլ՝ որոնց մէջ բոյսերը մէկմէկէ հեռու մէկ գծի վրայ պիտի տնկուին : Երբոր ամէն տեսակ կենդանիներ շատ կը սպասեն, պէտք չէ անոնց ամենուրեք աղբը մէկմէկու խառնել . հապա պէտք է ընդարձակ, ու քիչ մը դարվար տեղ մը ընտրել՝ շուքի մէջ, բոլորտիքը ցած պատ մը քաշուած, ու անոր մէջ բլրի ձևով զատ զատ դիզել :

Հ. Պարարտութիւնը ինչպէս կը գործածուի :

Պ. Բնաջին տեսակի պարարտութիւնները պարզ կամ ջրով խառնելով ուղղելու կուզան : Չորտ պարարտութիւնները՝ հունտը ցանելէն առաջ և ծլելուն պէս կը գործածուին . բայց սաստիկ տաք ու չոր ատեն պէտք չէ բանեցրնել Զաւերունն ու թռչուններունը նախ չորցրնելու ու ծեծելով փոշի դարձրնելու է, և հունտը ցանելու ատեն պէտք է տարածել :

Սկիորներն ու եղջիւրները ծեծելով ու մանրելով կը գործածուին . ասոնց ուժը երկայն կը դիմանայ, որովհետև կամաց կամաց կը քայքային :

Բուսական պարարտութիւն ալ պէտք չէ երեսէ ձգել, վասն զի ասով կը շինուի ան պարարտ հողը որ փտտութի կ'ըսուի, և երկիրը շատ կը պարարտացրնէ . մանաւանդ երբոր կրի՝ փութասի՝ ստոյի ու ամոնիաքի հետ խառնուի :

Հ. Պարարտութիւն գործածելու ատեն ինչ ընդհանուր զգուշութիւններ ընելու է .

Պ. Պէտք է ճանչնալ հողին տեսակն ու յատկութիւնները . այսինքն պաղ ու կալուն հողերուն՝ տաք ու դիւրահալ աղբ պէտք է . ան հողերը՝ որոնց մէջ քիչ կիր կայ՝ անոնց կրային բաղադրութիւն պէտք է . թեթեւ ու աւազոտ հողերուն կալուն պարարտութիւն պէտք է և այլն :



ՃԱՐՏԱՐՈՒԹԻՒՆ

Բնականութեան լապտեր :

ՇԱՏ անգամ կը պատահի որ անխահանքերը փորելու ատեն մէջէն ջրածին կազ կ'ելլէ ու բոլոր գետնին տակը՝ ուր որ գործաւորները կը բանին՝ կը լեցուի . աս կազը սաստիկ դիւրավառ ըլլալուն՝ շատ անգամ գոր-

Ծաւորներուն բանեցուցած կանթեղներուն բոցէն յանկարծ կը բռնկի, և ընդարձակիլ ուզելով՝ ածխահանքին մէկ դին մէկալ դին կը ճաթեցընէ. ահով գործաւորներուն որը փլածներուն տակը մնալով կը մեռնի, որն ալ ան բռնկած կազէն կ'այրի կը մրկի՝ Աւստի հարկաւոր էր նոր տեսակ լապտեր մը շինելու, որ չկարենայ կազը բռնկցընել, ու աս ամէն խեղճութեան դիմացը առնուի :

Արկու անգղիացի բնալոյծներ դիտեր տեսեր էին, թէ՛ որ և իցէ բռնկած կազ բարակ խողովակի մէջէն չկրնար անցնիլ. նմանապէս թէ որ ճրագի բոցին վրայ մետաղի կտոր մը կամ թել բռնենք, բոցը իր տաքութիւնը շատ մը կը կորսնցընէ. անոր համար կը սկսի չափէն աւելի ծուխ հանել : Այս պատճառաւ է որ եթէ երկաթի թելէ հիւսած ցանց մը բռնենք բոցին վրայ բոցը չկրնար ցանցին ծակերէն անցնիլ : Աւստի աս սկզբանց վրայ շինեց Տեւի բնալոյծը իր ապահովութեամբ լապտերը՝ : Այսինքն պողպատ թելէ հիւսուած ցանցով մը պատեց բոցին չորս դին. աս բանս աղէկ յաջողեցաւ, և հիմա ամէն ածխահանքերու մէջ աս կերպով շինուած լապտեր կը բանեցընեն : Ասն զի թէպէտ և ցանցին տակի կազը բոլորովին ալ բռնկի, չկրնար բոցը դրսի կազը բռնկցընել, վերի ըսուած պատճառին համար : Այս լապտերը կրնայ գործածուիլ նաև տնական բաներու մէջ, ինչպէս ցորեննոցները, մարագները, ածխանոցներն ու գինետունները մտնելու ատեն. վերջապէս ուր որ այնպիսի նիւթեր դրուած են՝ որ կրնան դիւրաւ բռնկիլ :

Պարոն Տիւմէնիլ՝ անունով գաղղիացին 1834<sup>ին</sup> հնարեց ուրիշ տեսակ լապտեր մըն ալ որ 1837<sup>ին</sup> Վաղղիացուոց ձեմարանը ընդունեցաւ : Այսիկայ հաստ ապակիէ գլան մըն է՝ տա-

սը կամ տասուերկու հատ երկըթէ հաստ թելերով պատած : Արի կողմը երկու հատ կոնոնաձև ծակ կայ՝ մետաղէ ծածկութեով. աս ծակերէն կը մտնէ օդը լապտերին մէջ, իսկ բոցը ծխնելու զի պէս խողովակէ մը դէպ ՚ի վեր կը բարձրանայ, և ան խողովակին վերի ծայրը մետաղէ ծածք մը կայ՝ քովերը բաց : Ապտերը աս կերպով շինուած ըլլալուն համար, օդը սաստիկ յորձանքով մը վարի ծակերէն ներս կը մտնէ անդադար ու խողովակին վերի կողմէն դուրս կ'ելլէ : Աւստի երբոր ջրածին ածխուտ կազը լապտերին մէջ բռնկի, մէկէն կը սկսի լապտերին ապակին սաստիկ ցնցուելով քովի երկաթներուն զարնուիլ. և ան ձայնը այնչափ զօրաւոր է որ գործաւորները հեռուէն ալ կը լսեն, վրայ կը հասնին ու կը մարեն :



Նոտերո Ռիտորները Նարբեւո Դեղ :

Այս լիպրէ սև սապոնը ութը լիպրէ ջրի մէջ հալեցուր, ու պզտիկ աւելով մը մէկտեղ ժողվուած թրութորներուն վրայ սրսկէ. իսկ թէ որ մէկտեղ չեն, բոլոր ծառին վրայ ցանէ ան ջրէն. որդերն որ աս ջրով կը թրջուին՝ կը մեռնին. միայն թէ քանի մը անգամ կրկնելու է գործողութիւնը :



ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱԳՐՈՒԹԻՒՆ

Այնիւսէ ու Վարդէնի աշտարակները :

ԻՏԱԼԻԱՅԻՆ զարմանալի շէնքերուն մէջ խիստ անուանի են նաև աս երկու ծուռ աշտարակները Պոլոնիա քաղաքը : Ասոնց մէկը որ Այնիւսէի կ'ըսուի, ու Վտալիայի բարձր շէնքերէն

1 Տես Ա հատոր, Երես 178 :  
2 Գ.Ղ. Lampe de sureté. 3 Du Mesnil.